ՊՕՂՈՍ ԽԱՉԱՏՐԵԱՆ. Հայ հին գրականութեան մատենագիտութիւն. *Երևան, «Տիգրան Մեծ», 2016, 614 էջ:*

Լույս է տեսել Պողոս Խաչատրյանի «Հայ հին գրականության մատենագիտություն» մեծադիր հատորը, հեղինակին արժանի գրավիչ անակնկալներով: Գրավիչ է Լևոն Տեր-Պետրոսյանի «Առաջաբանը», ոչ միայն գործի ստեղծման հանգամանքների անձնական հուշումներով, այլև, դեպքերի ու դեմքերի գնահատության հարցում այնքան չափավոր ու դժվարահաճ մտավորականի անվերապահ հիացմունքով գրքի հեղինակի հանդեպ: «Յանձին Պողոս Խաչատրյանի, ժամանակակիցներս ուղեկից ունեինք տիպար մի մտավորականի», որը բանագետի բացառիկ հմտությունը զուգորդեր համաշխարհային գրականության, դասական երաժշտության, գեղանկարչության, լեզվագիտության և գրաբարի կատարյալ իմացությունը:

Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքը միանգամայն ուսանելի է արժեքների կորստյան ու բարոյական անկումների արդի պարագայում:

1944 թ. լույս է տեսել Կյուրեղ վարդապետ Քիպարյանի «Պատմություն հայ հին գրականության» հիմնարար աշխատությունը: Հետագա տարիներին հեղինակը վերստուգել, համակարգել ու լրացրել է աշխատությունը, սակայն նրան չի վիճակվում հրատարակել գրքի նոր տարբերակը: Այս գործը նախաձեռնում են բանասերներ Զուլալ Գազանճյանն ու Ներսես Տեր-Ներսիսյանը և խմբագրական ու այլ կարգի լրացումներով հրատարակում 1992 թվականին: Այս գրքի մատենագիտությունն է, որ կազմել է Պողոս Խաչատրյանը: Սակայն մահը ընդհատում է մատենագրի կյանքը, առկախ թողնելով գրքի տպագրության գործը, որի իրացումը հանձն է առնում Արշակ Բանուչյանը՝ լրացնելով այն հին և միջնադարյան մշակույթի պարբերաշրջանների վերաբերյալ Պողոս Խաչատրյանի մատենագիտական աշխատություններով (Մաշտոցյան, Հունաբան, Միաբանող եղբայրներ և այլն):

Գրքի «Ներածականը» արժանավոր աշակերտի երախտիքի խոսք է գերապատիվ ուսուցչի կերպարի հանդեպ: Համառոտակի անդրադառնալով Պողոս Խաչատրյանի գիտական հսկայածավալ գործունեությանը, Ա. Բանուչյանը հատկապես ընդգծում է նրա մասնագիտական բացառիկ հմտությունը, աշխարհայացքի լայնատեսությունն ու հանրագիտարանային իմացականությունը: Ուշագրավ է Ա. Բանուչյանի դիտարկումը մատենագիտության գիտական արժեքի վերաբերյալ. «Թվում է,– գրում է նա,– ժամանակակից թուային տեխնոլոգիաների զարգացման եւ համակարգչային շտեմարանների ընձեռած տարատեսակ հնարավորությունների պայմաններում ավելորդ է մատենագիտություն հրատարակելը: Մատենագի-

տութիւնը, սակայն, սոսկ հրատարակուած գրքերի ու յոդուածների ցուցակ չէ, այլ ուսումնասիրաթիւն յայտնաբերելու փնտրուած նիւթը ողջ գրական ժառանգութեան բովանդակութեան մեջ բացայայտելու հետաքրքրող հեղինակի կամ տեքստի մասին գիտական մտքի ողջ պաշարը եւ որպես ուղեցոյց, շրջանառութեան մեջ դնելու նախկինում հրապարակուած բոլոր նիւթերը»:

Միանգամայն տրամաբանված է աշխատության կառուցվածքը: Մատենագիրները դասավորված են այբբենական կարգով և յուրաքանչյուրը ներկայանում է միասնական սկզբունքի ենթարկված պարբերացմամբ՝ Կենսագրական ակնարկ, Հրատարակություններ, Թարգմանություններ, Ուսումնասիրություններ: Ըստ այս կառուցվածքի, մատենագետի ամենատես հայացքից ոչինչ չի վրիպում հին և միջնադարյան գրականության ստեղծումներից: Իր ամբողջության մեջ Պողոս Խաչատրյանի մատենագիտությունը մի իսկական հայելի է, որի մեջ ցոլանում են հին և միջնադարյան գրականության մասունքները և այս իմաստով նրա գիտական ու օգտագործական արժեքը գնահատելի է Քիպարյանի «Պատմություն հայ հին գրականության» աշխատության զուգահեռի վրա:

Գրքի հավելվածում «Իմ մասին» կենսագրական ակնարկն է: Տող առ տող հառնում է Պողոս Խաչատրյանի կյանքի ուղին՝ նրա անհատականության և աշխարհայացքի կազմավորման սերնդաբանության՝ տոհմի ավանդույթների և հայրենի եզերքի անզուգական բնաշխարհի գեղեցկությամբ. «Ես ընկալեցի երկնքի կապոյտի խորութիւնն ու խորհրդավորութիւնը: Գիշերը աստղերի ճաճանչը բերկրանքով էր լցնում իմ հոգին: Ամենամեծ տպավորութիւններս մեծ գիւղաշխարհի բնությունից են: Հիմա էլ, տասնամեակներ անց, երբ մտորումներիս եմ յանձնում, հեռվից հեռու հոգիս շոյում-մխիթարում է մեր այգիների, անտառների, մեր մով երկնքի պատկերներով ու թռչունների դայլայլով: Ես կիսատ մարդ կլինեի, եթե գիւղում չծնուէի»: Նույն այս բանաստեղծական ներշնչանքը կա միջնադարի՝ հայ մատենագիտական նրա հետազոտություններում:

Անմոռաց զգացումով եմ վերհիշում մտերմիկ հանդիպումները Գրականության ինստիտուտում և նրա բանիմաց արձագանքները գրականության ընթացքի և նորահայտ անունների ստեղծագործական որոնումների վերաբերյալ: «Իմ մասին» կենսագրական ակնարկը Պողոս Խաչատրյանն ավարտում է աղոթքի պես մաքուր իր դավանանքի երդումով, որ վայել է միայն սուրբ հոգիներին. «Խղճի մտօք և համոզմունքով խոստովանում եմ, որ հոգով հավատաւորն եմ Սբ. Էջմիածին Մայր Աթոռի, մեր պաշտելի Առաքելական եկեղեցու և դաւանանքս է Սբ. Գրիգոր Լուսաւորչի վարդապետութիւնը»:

Պողոս Խաչատրյանը միանգամայն պատվավոր տեղ ունի հայ բանագիտության դասականների շարքում:

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ